

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ,,  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ռ Ե Կ Տ Ո Ր

15 նոյեմբերի 2018թ .

N 216/1

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, ղեկավարվելով „Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,, պետական ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ համալսարան/ կանոնադրության 27-րդ կետի դրույթներով.

Հաստատել համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջի ներքին կարգապահական կանոնները՝ համաձայն հավելվածի:

Ռեկտոր՝

Կ.ԱԹՈՅԱՆ

15 նոյեմբերի 2018թ .  
ք. Երևան

Հավելված  
„Հայաստանի պետական տնտեսագիտական  
համալսարան, ՊՈԱԿ ռեկտորի  
15 նոյեմբերի 2018թ .  
թիվ 216/1 հրամանի

**ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**  
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»**  
**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ**  
**ՔՈԼԵՋԻ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույնով սահմանվում են «Հայաստանի Հանրապետության պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ համալսարան) ֆինանսատնտեսագիտական քոլեջի (այսուհետ՝ քոլեջ) ներքին կարգապահական կանոնները (այսուհետ՝ կանոններ):
2. Սույն կանոնները կանոնակարգում են քոլեջի աշխատողների և սովորողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցները, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող այլ հարցեր:
3. Սույն կանոնները տարածվում են քոլեջի բոլոր աշխատողների և սովորողների վրա:

**II. ՔՈԼԵՋԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ**

Քոլեջի աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

**V. ՔՈԼԵՋԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ**

4. Քոլեջի սովորողներ են համարվում օրենսդրությամբ սահմանված կարգով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունված ուսանողները:
5. Քոլեջի և ուսանողի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն անչափահաս ուսանողի ծնողի (խնամակալի) հետ կնքված պայմանագրով:
6. Քոլեջի տնօրինությունը, մինչև պայմանագրի կնքումը, ծանոթացնում են սույն կանոնակարգին, քոլեջի այլ կանոններին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման կարգին և ուսանողի իրավունքներին և պարտականություններին:
7. Առաջին կուրս ընդունված, ինչպես նաև հաջորդ կուրսերում սովորող ուսանողների նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:
8. Սովորողներին պետական կրթաթոշակի տրման կարգը և չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
9. Ուսանողը կուրսից կուրս տեղափոխվում է ուսումնական ծրագիրն ամբողջովին կատարելուց և քննական բոլոր առաջադրանքները հանձնելուց հետո՝ համալսարանի ռեկտորի հրամանի հիման վրա:
10. Ուսանողը, քոլեջի հետ պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում, մուծում է ուսման վարձը: Հակառակ դեպքում ուսանողը հեռացվում է քոլեջից:
11. Ուսման վճարը չվճարելու հիմքով հեռացված անձը ազատման/հեռացման հրամանի օրվանից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսանողական իրավունքի վերականգնման դիմում ներկայացնելու և վարձավճարը վճարելու դեպքում կարող է շարունակել իր ուսումնառությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ օրերը համընկնում են կիսամյակային քննաշրջանի հետ:
12. Քոլեջի դասախոսները ուսանողների նկատմամբ դրսևորում են օբյեկտիվ, հարգալից, ուշադիր և բարեկիրթ մանկավարժական վերաբերմունք:

13. Ուսանողները քոլեջի դասախոսների և այլ աշխատողների նկատմամբ ցուցաբերում են հարգալից վերաբերմունք, ճշտապահություն ու հանդուրժողականություն, ինչպես նաև քաղաքավարի վարքագիծ:

14. Սույն կանոնների խախտումը դիտվում է որպես կարգապահական կանոնների կոպիտ խախտում:

15. Քոլեջում և հատկապես լսարանների մոտ արգելվում է աղմկել, բարձր խոսել, դասերի ժամանակ անհարկի անցուդարձ անել, բացել լսարանների դռները:

16. Դասերի ժամանակ բջջային հեռախոսները պետք է անջատվեն: Խիստ արգելվում է դասերի ժամանակ բջջային հեռախոսով խոսել կամ այլ կերպ օգտագործել, ինչպես նաև այն դնել լսարանի տեսանելի վայրում:

17. Քննական միջոցառումների ժամանակ արգելվում է օգտվել բջջային հեռախոսից կամ արտաքին կապ ապահովող տեխնիկական այլ միջոցներից:

18. Ուսանողները դասերին պետք է ներկայանան սահմանված ժամանակին: Ուշացման դեպքում ուսանողը մատյանում պետք է ստանա «բացակա»:

19. Դասերի ժամանակ լսարանից դուրս գալ ուսանողը կարող է միայն դասախոսի թույլտվությամբ:

20. Ուսանողի բացակայությունները համարվում են հարգելի, եթե ներկայացվում են համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

21. Քոլեջի տարածքում ուսանողները պարտավոր են ունենալ ուսանողական տոմս:

22. Սովորողների կողմից սույն կանոնների պահպանման նկատմամբ անմիջական վերահսկողություն իրականացնում են տնօրենը, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը, ուսումնադաստիարակչական գծով համակարգողը, կուրսղեկները:

23. Քոլեջի սովորողն իրավունք ունի՝

- 1) մասնակցելու ներքոլեջական և արտաքոլեջական միջոցառումներին՝ սահմանված քոլեջի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան-ծրագրով,

- 2) օրենքով սահմանված կարգով փնտրել և ստանալ անհրաժեշտ ուսումնական գիտակրթական տեղեկատվություն, ինչպես նաև ունենա սեփական կարծիքն ու համոզմունքներն արտահայտելու կրթական, մշակութային տարածք
- 3) պաշտպանել իր պատիվն ու արժանապատվությունը ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, քոլեջի աշխատողների և սովորողների ոչ իրավաչափ գործողություններից,
- 4) անվճար օգտվելու քոլեջի գրադարաններից, լաբորատորիաներից, բուժական և այլ ծառայություններից, մասնակցելու սեմինարներին.
- 5) օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.
- 6) ծանոթանալու քոլեջի կանոնադրությանը և նորմատիվ այլ փաստաթղթերի,
- 7) փոխադրվելու մեկ այլ ուսումնական հաստատություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի.
- 8) ուսման բարձր առաջադիմության համար ստանալու խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

24. Սովորողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները.

- 1) շնորհակալության հայտարարում.
- 2) հուշանվերով պարգևատրում.
- 3) կարգապահական տույժի հանում:

25. Կրթությունը ընդհատած նախկին սովորողը, անկախ ընդհատման պատճառից, իրավունք ունի պետական լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով վերականգնելու իր ուսանողական իրավունքները, բացառությամբ առաջին կուրսի առաջին կիսամյակում կրթության ընդհատման:

26. Քոլեջի սովորողը պարտավոր է կատարել ներքին կարգապահական կանոններով սահմանված պարտականությունները:

27. Քոլեջի սովորողները պարտավոր են՝

- 1) սահմանված ժամկետներում կատարել ուսումնական պլանով նախատեսված առաջադրանքների բոլոր տեսակները,
- 2) տիրապետել որակավորման պահանջներով սահմանված գիտելիքներին և հմտություններին,
- 3) հաճախել ուսումնական պլանով նախատեսված բոլոր լսարանային պարապմունքներին և խմբային աշխատանքներին,
- 4) պահպանել քոլեջի ուսուցման տեխնիկական միջոցները և խնամքով վերաբերվել քոլեջի գույքին,
- 5) տեղյակ պահել իրենց անձնական տվյալների փոփոխման մասին,
- 6) քոլեջում գտնվելու ժամանակ իր հետ ունենալ ուսանողական տոմսը, իսկ ազատման կամ հեռացման դեպքում վերադարձնել ուսանողական տոմսը,
- 7) բարձր պահել քոլեջի պատիվն ու հեղինակությունը:

28. Սովորողները, ովքեր չեն կատարում ուսումնական պլաններով և ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված առաջադրանքները, ցուցաբերում են անբավարար առաջադիմություն, քոլեջի տարածքում խախտում են հասարակական կարգն ու կարգապահական կանոնները, Տնօրենի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի, ընդհուպ մինչև համալսարանի ռեկտորին հեռացման վերաբերյալ առաջարկության ներկայացում:

29. Սովորողի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, պայմանագրային դրույթների, սույն կարգապահական կանոնների խախտման դեպքում նրա նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

- 1) նախազգուշացում
- 2) նկատողություն,
- 3) խիստ նկատողություն,
- 4) հեռացում (ազատում) քոլեջից,

30. Անհարգելի բացակայությունների մասով կարգապահական տույժերը կիրառվում է
- 1) 20-40 ժամի համար՝ նախազգուշացում
  - 2) 41-60 ժամի համար՝ նկատողություն
  - 3) 61-70 ժամի համար՝ խիստ նկատողություն
  - 4) Կրկնակի անգամ խիստ նկատողություն ստացած ուսանողը հեռացվում է քոլեջից:
31. Կիսամյակի ընթացքում ուսումնական պարապմունքներից 150 ժամ և ավելի հարգելի բացակայություններ ունենալու դեպքում՝ համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու հիմքով ուսանողին տրվում է ակադեմիական տարկետում:
32. Կիրառված կարգապահական տույժի մասին տեղեկացվում է ուսանողական համակազմին:
33. Մինչև կարգապահական տույժի կիրառումը սովորողից պահանջվում է գրավոր բացատրություն: Բացատրագիր տալուց հրաժարվելը հիմք չի հանդիսանում համապատասխան տույժ չկիրառելու համար:
34. Կարգապահական տույժի կիրառման հրամանը տրվում է կարգապահական կանոնների խախտում հայտաբերելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հրամանի քաղվածքը պահպանվում է սովորողի անձնական գործում:
35. Սովորողի յուրաքանչյուր բացակայություն պետք է հիմնավորվի (գրավոր) սովորողի կողմից քոլեջ ներկայանալու առաջին օրվա ընթացքում: Առողջական վիճակով պայմանավորված բացակայության մասին սովորողը կամ նրա անունից որևէ մեկը պարտավոր է տեղեկացնել քոլեջի ուսումնամեթոդական բաժնին՝ բացակայության օրվանից 2 օրվա ընթացքում: Եթե բացակայությունը պայմանավորված չէ առողջական վիճակով կամ այլ հարգելի պատճառով, ապա այն համարվում է անհարգելի:
36. Առողջական վիճակի պատճառով բացակայության դեպքում սովորողը պարտավոր է ներկայացնել բժշկական համապատասխան փաստաթուղթ:
37. Հիվանդության պատճառով համապատասխան փաստաթուղթ ներկայացնելու դեպքում սովորողի բացակայությունը համարվում է հարգելի և չի ազդում կրթաթոշակի վրա:

38. Սովորողը ազատվում է քուլեջից՝

- 1) իր դիմումի համաձայն,
- 2) այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու կապակցությամբ:

39. Չի թույլատրվում սովորողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների ընթացքում:

## **VI. ՔՈՒԼԵԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

40. Քուլեջը, աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված, պարտավոր է՝

- 1) քուլեջի աշխատողների համար ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նրանց վերապահված իրավունքների և պարտականությունների ճշգրիտ ու ժամանակին կատարման, ինչպես նաև նրանց ներկայացվող սահմանափակումների պահպանման համար անհրաժեշտ պայմաններ.
- 2) աշխատողներին ապահովել համապատասխան աշխատանքով, նրանց ծանոթացնել աշխատանքային պայմաններին, ճշտորեն և պատշաճ կազմակերպել աշխատանքների կատարումը.
- 3) աշխատողների համար իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նպատակով ապահովել անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմաններ, ինչպես նաև, իրենց լիազորությունների սահմաններում, ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված մյուս սոցիալական երաշխիքների իրականացումը.
- 4) աշխատողներին վարձատրել պաշտոնային դրույքաչափերով սահմանված չափով.
- 5) աշխատողներին չտալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող, ինչպես նաև հանձնարարականեր տվողի



և կատարողի լիազորությունների շրջանակներից դուրս հանձնարարականներ.

- 6) աշխատողներին ծանոթացնել քոլեջի գործավարության կարգի, անվտանգության տեխնիկայի կանոնների, սույն կանոնների հետ, ինչպես նաև ապահովել դրանց կատարումը.
- 7) ժամանակին արձագանքել աշխատողների կարիքներին ու պահանջներին, բարելավել նրանց աշխատանքի պայմանները.
- 8) ապահովել սույն կանոնների պահանջների անշեղորեն կատարումը և ժամանակին արձագանքել դրանց խախտումներին.
- 9) միջոցներ ձեռնարկել աշխատողների որակավորման պարբերաբար բարձրացումն ապահովելու ուղղությամբ:

Սույն կետի ենթակետերում նշված պարտականությունների հերթականությունը պայմանավորված չէ դրանց կարևորության աստիճանով:

41. Քոլեջի աշխատողը աշխատանքային կարգապահության պահպանման մասով պարտավոր է՝

- 1) պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի, քոլեջի տնօրենի և համալսարանի ռեկտորի հրամանների և հանձնարարականների, իր պաշտոնի անձնագրի պահանջները, ինչպես նաև ժամանակին ու ճշգրիտ կատարել դրանցով սահմանված հիմնական աշխատանքային պարտականությունները, պահպանել դրանցով նախատեսված սահմանափակումները.
- 2) ժամանակին ու ճշգրիտ կատարել իր անմիջական ղեկավարի՝ իր լիազորությունների շրջանակներում տրված հանձնարարականները.
- 3) ժամանակին և ճշգրիտ կատարել սույն կանոնների պահանջները.
- 4) խնամքով վերաբերվել աշխատանքային պարտականությունների, ինչպես նաև հանձնարարված աշխատանքների կատարման նպատակով հատկացված տեխնիկական, ֆինանսական և մյուս միջոցներին, ճիշտ և նպատակային օգտագործել դրանք.

- 5) աշխատանքի վայրում պահպանել անվտանգության տեխնիկայի պահանջները.
- 6) աշխատանքի ժամերին մշտապես գտնվել աշխատանքի վայրում կամ աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով մեկնած մյուս վայրերում և առանց աշխատանքային անհրաժեշտության կամ անհարգելի պատճառներով չբացակայել այդ վայրից.
- 7) աշխատասենյակում պահպանել կարգուկանոն, չաղմկել.
- 8) բարեխղճորեն և խնամքով վերաբերվել քոլեջի վարչական շենքի և դրանում առկա հիմնական ոչ հիմնական միջոցների նկատմամբ՝ չպատճառելով գույքային վնաս:
- 9) պահպանել և կատարել սույն ներքին կանոնների մյուս դրույթների պահանջները.

42. Սույն կետի ենթակետերում նշված պարտականությունների հերթականությունը պայմանավորված չէ դրանց կարևորության աստիճանով:

43. Աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված՝ Քոլեջի աշխատողն ունի նաև իրավական այլ ակտերով, ինչպես նաև սույն կանոններով նախատեսված այլ պարտականություններ:

44. Քոլեջի աշխատողներին, աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված, արգելվում է.

- 1) աշխատանքային ժամերին կամ աշխատատեղում օգտագործել ոգելից խմիչքներ կամ աշխատանքի ներկայանալ ոգելից խմիչքներ օգտագործած վիճակում,
- 2) ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվել,
- 3) աշխատանքային ժամերին զբաղվել իր աշխատանքային պարտականությունների հետ չկապված ցանկացած այլ գործունեությամբ, բացառությամբ՝ Օրենքով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև սույն ներքին կանոններով սահմանված դեպքերի,

4) չծխել քոլեջի վարչական շենքի ընդհանուր օգտագործման տարածքներում՝ միջանցքներում, լսարաններում, դահլիճներում, ընդունարաններում (ծխել թույլատրվում է միայն դրա համար նախատեսված տեղերում):

45. Քոլեջի աշխատողներին կարող են ներկայացվել նաև աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված՝ իրավական ակտերով, ինչպես նաև սույն կանոններով նախատեսված այլ սահմանափակումներ:

## **VII. ՔՈԼԵՋԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՄԵԼԸ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼԸ**

46. Աշխատանքային պարտականությունների օրինակելի և բարեխիղճ կատարման համար աշխատողների նկատմամբ կիրառվում են խրախուսանքի հետևյալ տեսակները՝

- 1) շնորհակալության հայտարարում,
- 2) միանվագ դրամական պարգևատրում,
- 3) հուշանվերով պարգևատրում,
- 4) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում,
- 5) կարգապահական տույժի հանում:

47. Խրախուսանքները կիրառվում են համալսարանի ռեկտորի հրամանով՝ քոլեջի տնօրենի ներկայացմամբ:

48. Կարգապահական խախտումներ թույլ տալու համար աշխատողները ենթակա են կարգապահական պատասխանատվության:

49. Քոլեջի աշխատողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար կարող են հիմք ընունվել իրենց վերապահված աշխատանքային պարտականությունները նրանց կողմից անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, իրենց լիզորությունները վերազանցելու, սույն կանոնները խախտելու փաստերի մասին գրավոր բացատրությունները, ինչպես նաև դրանց

վերաբերյալ աշխատողների և նրանց անմիջական ղեկավարների համապատասխան զեկուցագրերը:

50. Քուլեջի աշխատողների նկատմամբ կարգապահական տույժերը կիրառվում են համալսարանի ռեկտորի հրամանով, քուլեջի տնօրենի ներկայացմամբ:

51. Աշխատանքային կարգապահության խախտման համար կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը՝

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) աշխատանքային պայմանագրի լուծում՝ աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու, աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու, աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գնվելու, անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու հիմքերով:

52. Քուլեջի աշխատողների նկատմամբ կարգապահական տույժ նշանակելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները.

- 1) կարգապահական խախտման ծանրության աստիճանը.
- 2) կարգապահական խախտում կատարած աշխատողի մեղքի աստիճանն ու տեսակը.
- 3) կարգապահական խախտումը կատարելու հանգամանքներն ու պայմանները.
- 4) աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը.
- 5) այն բոլոր բացասական հետևանքները, որոնք առաջացրել է կամ կարող էր առաջացնել տվյալ կարգապահական խախտումը:

53. Միննույն կարգապահական խախտումը մեկից ավելի աշխատողների կողմից կատարվելու դեպքում յուրաքանչյուր աշխատողի վերաբերյալ տրվում է կարգապահական տույժ նշանակելու մասին առանձին հրաման:

54. Կարգապահական տույժ կիրառելը քուլեջի աշխատողին չի ազատում համապատասխան իրավական ակտերով սահմանված՝ իր աշխատանքային պարտականությունների կատարումից, որոնք չկատարելու, ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև վերազանցելու համար աշխատողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

55. Կարգապահական տույժ կիրառելը քուլեջի աշխատողին չի ազատում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության մյուս տեսակներից:

56. Քուլեջի աշխատողի նկատմամբ նշանակված կարգապահական տույժը (տույժերը) հանվում է, ինչպես նաև նա համարվում է կարգապահական տույժի (տույժերի) չենթարկված՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ և սույն կանոններով սահմանված դեպքերում և կարգով:

57. Քուլեջի աշխատողների նկատմամբ նշանակված կարգապահական տույժը (տույժերը) հանելու հետ կապված՝ սույն կանոններով չնախատեսված հարցերը, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ռեկտոր՝

Կ.ԱԹՈՅԱՆ